

ՏԱՆԹԵԻ ՓՈՔՐ ԳՈՐԾԵՐԸ

Տանթեի փոքր գործերը մեղից ցոյց կու տան իր բանաստեղծական ճամբուն սկզբնական փուլերը, իր աստիճանաւոր յառաջդիմութիւնը եւ բարձրանալը դէպի բանաստեղծութեան կատարները, ինչպէս նաեւ իր դադարաւորութեան հասունութեան հասնիլը:

Այս գործերն են.

1. «Vita Nuova» (Նոր կեանքը) — «Նոր կեանքը» գրքոյ մըն է՝ որ ձեւացած է արձակ եւ ոտանաւոր դրութիւններէ. ուղղուած է Կուրտոյ Քաւալերանթի, որուն Տանթէ կը պատմէ իր սէրը հանդէպ Պէթրիչէի՝ սկսելով առաջին հանդիպումէն մինչեւ անոր մահուան անմիջական յաջորդող տարիները: Գրուած է 1292-1293 շրջանին: Վերնագիրը կ'ուզէ նշանակել ներխուստարդական կեանք կամ վերամոտրուած կեանք Պէթրիչէի սիրոյն ազդեցութեան տակ. հաւանաբար այս երկու իմաստներն ալ կը պարունակէ, որովհետեւ գրքոյ կը նկարագրէ բանաստեղծին վերելքը իր պատանեկութեան միամիտ սէրէն՝ դէպի երիտասարդութեան լուսաւոր դադարաւորականները: Նոր կեանքը կը պարունակէ քսանհինգ հինգիւններ (Sonetti), չորս երգեր (Canzoni) մէկ գեղոն (Ballata) եւ քառույթ մը (Stanza). արձակ մասերը մերթ կը բացատրեն բանաստեղծութիւնները եւ մերթ ալ կը պատմեն դրուագներ, որոնք առիթ տուած են անոնց յօրինումին:

Տանթէ ինը տարեկանին կը հանդիպի առաջին անգամ Պէթրիչէի, ապա դարձեալ ինը տարի ետք՝ տասնեւութը տարեկանին. Պէթրիչէ կը պատասխանէ իր բարեւին՝ իրր նշան իր գաղտնի սիրոյն համապատասխանելուն: Սակայն ազատելու համար օրիորդը որեւէ կասկածէ,

Տանթէ կը կեղծէ իրր թէ դրիշ կնոջ մը հետեւէր. ասոր մեկնելէն ետք Ֆիրենցէէն, դարձեալ ուրիշ կին մը կը դառնէ իրր պատրուակ: Այս կեղծիքը, սակայն, Տանթէի չուղած հետեւանքը կ'ունենայ. Պէթրիչէ վշտահար՝ այլեւս չի բարեւեր ղինքը. որով Տանթէ խորապէս կը զգացուի. սակայն չի դադարի իր գաղտնի սէրը շարունակելէ՝ մաքրելով զայն ամէն աշխարհային կապերէ եւ բարձրացնելով դադարաւորական մաքրութեան: Այլեւս պէտք չունի սիրոյ որեւէ նշանի, որովհետեւ ինքնիր մէջ կը կրէ այդ կատարելութեան պատկերը, որ իրեն անպատմելի երջանկութիւն մը կը պատճառէ: Կը պատահի որ Տանթէ ծանրապէս հիւանդանայ եւ իր դառնացանքներու մէջ կը տեսնէ թէ Պէթրիչէի հոգին հրեշտակներէ երկինք կը փոխադրուի: Այս դառնացանքի նախատեսութիւնը իսկապէս կ'իրականանայ. Պէթրիչէ քիչ օրեր ետք կը մեռնի, խոր սուգի եւ թախիծի մէջ թողնով բանաստեղծը: Օր մը կը տեսնէ, սակայն, թէ ուրիշ «ազնիւ կին» մը ցաւակցելով ղինքը կը դիտէ, որուն համար բանաստեղծը կ'ուրախանայ, մինչեւ որ անդրադառնայ թէ այս ուրախութիւնը նոր սիրոյ մը զգացումի կը փոխուի: Ասկից պայծար մը կը ծնի իր մէջ՝ մինչեւ Պէթրիչէի իրեն երեւիլը, այնպէս ինչպէս առաջին անգամ տեսած էր ղինքը, որուն վրայ կը յաղթանակէ անոր յիշատակը: Գրքոյ կը վերջանայ ուրիշ տեսիլքով մը, որուն մէջ Պէթրիչէ կ'երեւի պայծառակերպութեամբ, իրր խորհրդանշիչ եւ միշտ վերադարձող նպատակ մը՝ գերագոյն կատարելութեան, որուն Տանթէ կը դիմէ իր ամբողջ կեանքի ընթացքին:

Քննադատներէն շատերը համաձայն չեն

նիւթին պատմականութեան մասին. բայց շատ հաւանաբար ունենայ հիմ մը՝ որուն վրայ կ'առուցուած է բանաստեղծական յօրինուածքը: Գրական տեսակէտով այս հարցը երկրորդական կը մնայ. այս գործին արժէքը իր բանաստեղծական արտայայտութիւններուն մէջն է, որով Տանթէ կամաց կամաց կը բաժնուի ժամանակակիցներէն եւ կ'առնէ իր ինքնատուութիւնը, ոճը եւ լեզուն: Բաց ասկից իտալական դրականութեան մէջ բացառիկ կարեւորութիւն մը կը ստանայ այս գրքոյ կը, անով որ, առաջին յաջող եւ բեղուն փորձն է իտալերէն արձակագրութեան:

2. «Rime» (Յանգեր) Այս գիրքին մէջ հաւաքուած են Տանթէի շատ մը բանաստեղծութիւնները, առանց թուականի եւ առանց բացատրութիւններու թէ ինչու անոնք գրուած էին: Այս հաւաքածոյն կատարած են իր յաջորդները եւ կոչած են «Rime»: Ասոնք կը ներկայացնեն Տանթէի երիտասարդութեան զերթուածները, որոնց մէջ շատ յայտնի են հետքերը իր առաջին փորձերուն եւ իր հետեւած հեղինակներուն կամ դպրոցներուն, մինչեւ հասնիլ իր անհատականութեան, որ կը յայտնուի Vita Nuova-ի մէջ: Ասոնց մէջ կան յաջողներ եւ շատ գեղեցիկներ:

Նկատողութեան արժանի են «Tenzoni» Բանախոններ, կատարուած Տանթէի եւ Ծիրեղէ Տոնաթոյի միջեւ, որոնց մէջ զիրար կը նախատեն, մինչեւ իսկ կոպտութեան հասնելու չափ, սակայն ոչ թէ թշնամութեան համար, որովհետեւ իրարու բարեկամ էին, այլ պարզապէս հետեւելու համար ժամանակի թեթեւամիտ երիտասարդական սովորութեան մը: Յետոյ «Rime Pietrose» Քարուտ յանգեր, որուն մէջ բանաստեղծը ջերմ զգացումներով եւ կիրքով կ'երգէ իր սէրը եւ յուսախաբութիւնները քաբի մը հանդէպ, այս ինքն է քարասիրտ կնոջ մը հանդէպ: Ասոնց մէջ շատ յայտնի կ'երեւին Տանթէի տաղաչափական արուեստի ճարտարութիւնն ու կատարելութիւնները:

Դարձեալ Rime-ներուն մէջ կան խումբ մը այլաբանական եւ վարդապետական զերթուածներ: Այլաբանականներուն մէջ կը նոյնացնէ «ազնիւ կինը» իմաստասիրութեան հետ, սակայն չի ներկայացնէր չափ իրր ծանր խոհական տիկին մը, այլ երիտասարդական գեղով առցուն պարմանուհի մը: Ասոնք, սակայն, չափազանց ծանրաբեռնուած են այլաբանութիւններով:

3. «Convivio» (Խմիչք). Convivio համայնադիտարանի մը ընդթը պիտի ունենար՝ կազմուած տասնեւհինգ գիրքերէ, առաջինը իրր ներածութիւն, իսկ միւսները իրր մեկնութիւն տասնեւչորս այլաբանական զերթուածներու. ասիկա իր մէջ պիտի պարունակէր իր դարուն բոլոր գիտելիքները, կրօնական, բարոյական, քաղաքական եւ բնական: Ասոնցմէ, սակայն, միայն առաջին չորս գիրքերը յօրինուած են, 1304-1307 շրջանին, եւ սերտ կապ ունին պատմական կերպով Vita Nuova-ի հետ՝ որուն գրեթէ շարունակութիւնը կը կազմեն: Տանթէ յետ պարզելու թէ իր երիտասարդութեան գործին մէջ «ազնիւ կինը» անունին տակ պէտք է իմաստասիրութիւնը հասկնալ, կը ցուցնէ թէ ինքը ո՛րքան նեղութիւններ կրած է եւ աշխատանք թափած անոր տիրանալու համար: Մէկ խօսքով «Convivio» կը ձգտի ըլլալ, այլաբանական զերթուածներու մեկնութեան ձեւին տակ, արտայայտութիւնը իր նոր սիրոյն, ոչ երկրաւոր, այլ իմաստութեան, փառարանութիւնը առաքինութեան եւ ուղղութեան:

«Convivio» ինքնակենսագրութեան հետ, է նաեւ վարդապետական դրութիւն մը, առանց յատուկ կարգի. որով նիւթն ալ ժամանակի սովորութեան համաձայն չէ դասաւորուած, այլ ազատօրէն յօրինուած: Մեկնելով երգերը, Տանթէ առիթ կ'առնէ նիւթը ընդլայնելու եւ բացատրելու՝ չորս տեսակէտներու տակ — տառական, այլաբանական, բարոյական եւ խորհրդարանական, ինչպէս որ սովորութիւն էր նոյն ժամանակները մեկնել գրքերու:

Յատուկ կարեւորութիւն մը ունի չորրորդ դրժին մէջ Կայսրութեան վրայ ճառը, ուր Տանթէ կը ցուցնէ թէ Կայսրութիւնը իբր նախախնամական առաքելութիւն մը յանձնուած էր հռոմայեցի ժողովուրդին, մինչ անկէ առաջ՝ Կայսրութիւնը կը նկատէր իբր պտուղ մարդկային բռնութեան:

Այս երկը ցոյց կու տայ Տանթէի մտքին ընդարձակութիւնը, թէեւ չի բարձրանար Միջին Դարու գիտելիքներու չրջանակէն դուրս: «Convivio»-ի արժէքը կը կայանայ գլխաւորաբար իր նպատակին մէջ, որով գիտութիւնը ինքնին նպատակ մը չէ, այլ միջոց մը միայն՝ յատակելու ժամանակին խղճի հարցերը: Ասոր համար ալ է որ ինքը գրած է զայն խառնելէն ժողովրդական լեզուով, եւ ոչ թէ լատիներէն, ինչպէս նոյն ժամանակները սովոր էին գրել նման նիւթեր. կոչած է զայն «Convivio» - իմնոյթ, ուր բաղմած են ոչ թէ ուսեալներ, այլ «խեղճեր», այսինքն անոնք որոնք որեւէ պատճառով հեռու մնացած են գիտութենէն:

Այս դործին մէջ Տանթէի խառնելը շատ ընտիր եւ կորովի է:

4. «De Vulgari Eloquentia» (Ժողովրդական փարսաբարձութեան մասին). Ասիկա լատիներէն գրութիւն մըն է, դարձեալ 1304-1307ի միջեւ գրուած՝ դոնէ այդ կտորը որ մեղի հասած է: Տանթէ այս դործին չորս դիրքերէն, որոնցմէ պիտի կազմուէր, գրած է միայն առաջինը եւ երկրորդին տասնեւչորս գլուխները: Նպատակն է փնտռել թէ ո՞րը պէտք է ըլլայ Իտալիոյ գրական լեզուն:

Կը խօսի լեզուներու զանազանութեան մասին, որոնց սկիզբը, Բաբելոնի աշտարակի շինութեան առթիւ, Աստուծոյ վրէկուած խառնակութիւնը պատճառած է. ապա կը թուարկէ իտալական դաւառաբարբառները եւ կը ցուցնէ թէ ասոնցմէ ոչ մէկը կրնայ Իտալիոյ գրական լեզուն դառնալ. ուստի կը համարի թէ այդ դրական լեզուն պէտք է կազմուի բոլոր դաւառաբարբառներէն առնելով, որ թէ-

եւ ոչ մէկ քաղաքին յատուկ ըլլայ, բայց պէտք է տարածուի ամէնուրեք. եւ պէտք է յօրինուի գրադէտներէն, եւ անոնցմէ ընտրեն այն տարրերը, որոնք լեզուն ներդաշնակեն, բարձրացնեն եւ ատակ դարձնեն դրական բարձր արտայայտութիւններու: «De vulgari eloquentia»-ի մէջ չի խօսիր, սակայն, ամէն տեսակ լեզուի մասին, այլ միայն ամէնէն բարձր լեզուն, որ Միջին Դարու դպրոցական աւանդութեան համաձայն՝ կը կոչուէր Ողբերգակ (Tragico), զանազանելով աւելի ցածերէն, այն է Կատակերգակն (Comico) եւ Խոնարհիկն կամ Եղբերգակն (Umile կամ Elegiaco): Որով ասիկա աւելի ճարտասանութեան եւ հետադարձութեան դասադիրք մըն է՝ քան լեզուաբանական կամ պատմական սրբապատմի:

5. «Monarchia» (Միապետութիւն). Աս ալ լատիներէն լեզուով գրութիւն մըն է, գրուած հաւանաբար Արիւիոյ է. Իտալիա դառնաւ ժամանակ, թերեւ 1312-1313ի ատենները եւ Տանթէի քաղաքական հասունութեան դործն է: Monarchia երեք ճառերէ կը կազմուի: Առաջինին մէջ կ'ապացուցուի թէ Կայսրութիւնը, ըմբռնուած՝ բոլոր ժողովուրդներու միութիւնը մէկ իշխանի տակ, պատահական բան մը չէ եւ ոչ ալ պատմական պատճառներու արդիւնք, այլ նախախնամական եւ Աստուծոյ կամքն է, որպէս զի ժողովուրդներու քաղաքական միութեամբ նաեւ կրօնական միութիւնը դործադրուի: Երկրորդին մէջ կ'ապացուցանէ թէ իրաւունքով՝ եւ ոչ թէ բռնութեամբ, հիմնած են Կայսրութիւնը: Իսկ երրորդին մէջ Պապին եւ Կայսրին փոխյարաբերութիւնները կը քննէ: Եւ ժամանակին ողբին հակառակ՝ կը հաստատէ թէ Կայսրին իշխանութիւնը անկախ է Պապինէն եւ ուղղակի կու դայ Աստուծոյ. այնուհանդերձ, Կայսրը պէտք է որդիական յարգանք ունենայ Պապին հանդէպ՝ որուն յանձնուած է գերագոյն պաշտօնը առաջնորդելու մարդիկ հոգեկան ճամբուն մէջ: Երկուքն ալ պէտք են իրարու հետ հա-

մերաշխ դործակցել, Կայսրը օրէնքներով մարդիկը ուղղէ առաքինութեան ճամբով դէպի երջանկութիւն, իսկ Պապը՝ մատակարարելով աստուածային գերբնական պարգեւները:

Տանթէ այս դործին մէջ ալ, ինչպէս «Commedia»-ի մէջ, պատմութեան տեսակէտէ մը կը շարժի, որ իր մէջ միջոցաւ աւելի յատակ եւ զօրաւոր կը դառնար. մարդը սկզբնական անկումէն ետք անյոյս կերպով կը թարթափէր, մինչեւ որ Աստուած հանց մենաշնորհեալ ժողովուրդ մը՝ Հռոմայեցիները, որպէս զի միացնեն բոլոր ժողովուրդները, որպէս զի ըլլայ նաեւ կրօնական միութիւն մը, սկիզբ տալով նոր պատմութեան: Աշխարհիս կառավարութեան համար՝ Աստուած ինքնին հաստատած է գերագոյն նուիրապետութիւնները. Պապութիւնն ու Կայսրութիւնը, երկու արեւներ. մարդոց այս ընդհանուր միութեամբ՝ Տանթէի համաձայն, պատմութիւնը կը փակուի. կը մընայ լոկ մարդուն բարոյական տրամը, յաւիտենական պայքար մը չարի եւ բարիի միջեւ:

6. Մնացած փոքրիկ դործերը՝ Տանթէն աւելի ճանշնալու համար կամ իր գրական արժէքին վրայ ոչինչ կ'աւելցնեն: Այս դործերն են.

«Epistole» (Նամականի) Տանթէի նամակներէն մեղի հասած են 13 հատ. ամէնէն շատ ասոնց մէջ է որ Տանթէ կը հետեւի ժամանակի գրական օրէնքներուն եւ ոճին:

«Egloghe» (Հովուերգութիւններ) գրուած 1319ին, ուղղուած Giovanni del Virgilio, Պոլոնիոյ Համալսարանի Ուսուցչապետին, բացատրելով թէ Commedia-ն ինչո՞ւ խառնելէն լեզուով գրած է, եւ ի՞նչ պատճառներ կ'արդիւնէ զինքը Պոլոնիա երթալու հրաւերը ընդունելու, զոր իրեն ուղղած էր Ուսուցչապետը:

«Quaesito de aqua et terra» (Հարցում ցուրի եւ երկրի մասին), գրուած 1320ին լատիներէն լեզուով, մասնակցելով ժամանակակից գիտական վէճի մը, որուն մէջ ինքը կը պաշտպանէ թէ ջուրը երկրիս վրայ ոչ մէկ տեղ ցամաքէն բարձր կըրնայ ըլլալ:

ՌԻՍՈՒՄՄԱՍԷՐ